



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 259

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 260

ԱՅԳԵՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սուրեն Թաթևյանի 2023 թվականի մարտի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 68 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Սուրեն Թաթևյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1175431, տրված՝ 2007 թվականի սեպտեմբերի 5-ին) Հրազդան քաղաքի Աղբյուրակ այգեգործական զանգվածում գտնվող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 3-րդ փողոց 21:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 261

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Կառլեն Հայրապետյանի 2023 թվականի մարտի 14-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 391 տան բնակիչ Կառլեն Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2188079, տրված՝ 2006 թվականի հունիսի 23-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 21/3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 262

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հասմիկ Սարգսյանի լիազորված անձ Գուրգեն Բարեղամյանի 2023 թվականի մարտի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Երևան քաղաքի Աջափնյակ, Նորաշեն թաղամասի 16 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Հասմիկ Սարգսյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտարի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 28-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում թիվ 8235, ժառանգական գործ 239/2021 / Լեոնանիստ գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեոնանիստ, 13-րդ փողոց 23:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 263

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Ռոբերտ Եղիազարյանի 2023 թվականի մարտի 13-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակի փողոց թիվ 19 տան բնակիչ Ռոբերտ Եղիազարյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի մարտի 13-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N 939, ժառանգական գործ N 69/ Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս 20/2:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 264

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գեղամ Հարությունյանի 2023 թվականի մարտի 15-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Երևան քաղաքի Սարիթաղ 9-րդ փողոց թիվ 3 տան բնակիչ Գեղամ Հարությունյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի փետրվարի 4-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N 598, ժառանգական գործ N 29 Կոտայքի մարզի Քաղսի գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 10-րդ փողոց 15:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 265

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Ազատ Մեջլումյանի 2023 թվականի մարտի 17-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի 2 փողոցի թիվ 24 տան բնակիչ Ազատ Մեջլումյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի փետրվարի 24-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N 744, ժառանգական գործ N 82/ Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 2-րդ փողոց 24:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 266

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Մակիչ Բաղդասարյանի 2023 թվականի մարտի 16-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի 2 փողոցի թիվ 3 տան բնակիչ Մակիչ Բաղդասարյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի մարտի 16-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N 993, ժառանգական գործ N 71/ Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 2-րդ փողոց 3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 267

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ
ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Գայանե Հայրապետյանի 2022 թվականի սեպտեմբերի 5-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվականի փետրվարի 10-ի թիվ 18 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2023 թվականի մարտի 20-ի N 487 գրավոր առաջարկությունը և Գայանե Հայրապետյանի լիազորված անձ Անուշ Հայրապետյանի կողմից տրված 2023 թվականի մարտի 21-ի թիվ 219 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 303/12 հասցեում գտնվող՝ 50.62քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 303/12 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 50.62քմ մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09032023-07-0137, գաղտնաբառ՝ WFCYWUZPNITA / գինը սահմանել 85000 /ութսունհինգ հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 26.49քմ մակերեսով հողամասը 77000 /յոթանասունյոթ հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 303 շենքի թիվ 45 բնակարանի բնակիչ Գայանե

Հայրապետյանին (այսուհետ գնորդ):

3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023թվականի N 268

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱԿՏՈՏՆԱԿԻ ԵՎ
ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Քնարիկ Զիլինգարյանի 2022 թվականի մարտի 14-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2022 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 62 մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով կառույցն ու հողամասը կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ 2023 թվականի մարտի 20-ի N 486 գրավոր առաջարկությունը և Քնարիկ Զիլինգարյանի կողմից տրված 2023 թվականի մարտի 21-ի թիվ 220 գրավոր համաձայնագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս թիվ 47/16 հասցեում գտնվող՝ 36.6քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:
2. Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս թիվ 47/16 հասցեում գտնվող Հրազդան համայնքի սեփականությունը հանդիսացող, սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված 36.6քմ մակերեսով ավտոտնակը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01022023-07-0156, գաղտնաբառ՝ 5WLDPDHFZVA / գինը սահմանել 85000 /ութսունհինգ հազար/ դրամ և նույն հասցեում գտնվող ավտոտնակի համար առանձնացված 36.6քմ մակերեսով հողամասը 251000 /երկու հարյուր հիսունմեկ հազար/ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կառույցն իրականացրած անձ՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքի թիվ 64 բնակարանի բնակիչ

Քնարիկ Չիլինգարյանին (այսուհետ գնորդ):

3.Գնորդը պարտավոր է գնման առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում որոշման 2-րդ կետով ավտոտնակի համար սահմանված գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504, իսկ հողամասի համար սահմանված գումարը 900125001140 գանձապետական հաշիվներին:

4.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2023թվականի N 269

**ԿԱՄՈ ՅՈՒՐԱՅԻ ԼԱԼԱՅԱՆԻՆ ՎԱՐԶԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Ա. Գալեչյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում գործող «Յուքոմ» կենտրոնի դիմաց Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 91 շենքի 32 բնակարանի բնակիչ Կամո Յուրայի Լալայանը իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով մրգեր, ինչն առաջացնում է վարչական իրավախախտում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով այն է ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Կամո Յուրայի Լալայանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Կամո Լալայանը հայտնել է, որ վատառողջ է, ունի ողնաշարի ճողվածք / գրիժա/ սոցիալապես ծանր վիճակում է գտնվում, տան միակ աշխատողը ինքն է, կինը նույնպես ունի առողջական խնդիրներ և վերջինս այդ քայլին դիմել է հանապազօրյա հաց վաստակելու համար և զղջում է կատարած իրավախախտման համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, ինչպես նաև Կամո Լալայանի սոցիալական ծանր վիճակի փաստը հաստատված է

համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Կամո Լալայանը, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն և իրավախախտումը կատարվել է ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 24-ի N 1 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կամո Յուրայի Լալայանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կամո Յուրայի Լալայանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

24 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2023թվականի N 270

**ԱՆԺԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Ռ.Ավետիսյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23 փողոցի <<Տիվա>> սուպերմարկետի հարակից փողոցի վրա Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 32 շենքի 4 բնակարանի բնակչուհի Անժիկ Սուրենի Սուքիասյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով կարտոֆիլ, ինչն առաջացնում է վարչական իրավախախտում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով այն է ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Անժիկ Սուրենի Սուքիասյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Անժիկ Սուքիասյանը հայտնել է, որ սոցիալապես ծանր վիճակում է գտնվում, թոշակառու է, բնակվում է միայնակ, այդ քայլին դիմել է հանապազօրյա հաց վաստակելու համար և զղջում է կատարած իրավախախտման համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, ինչպես նաև Անժիկ Սուքիասյանի սոցիալական ծանր վիճակի փաստը հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար

պատասխանատու է Անժիկ Սուքիասյանը, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն և իրավախախտումը կատարվել է ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 24-ի N 2 արձանագրությունը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անժիկ Սուրենի Սուքիասյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժիկ Սուրենի Սուքիասյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



24 մարտի 2023թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023թվականի N 271

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրամանի հավելված N1-ի 8.4 կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հրազդանի համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված 2023 թվականի մարտի 28-ին՝ ժամը 15:00-ին անցկացվող մրցույթի հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 մարտի 2023թ.
ք.Հրազդան



27/03/2023 3:00:28 PM

Գրասեր պաշտոններ /28-03-2023/ (ծածկագիր՝ խմբ-3_230328_1500)

Հանձնաժողովի կազմը

Գևորգ Աբրահամյան

Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Գուրգեն Հակոբյան

Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Սուսաննա Մկրտչյան

Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Ավագ մասնագետ

Ռոբերտ Թումոյան

Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Գլխավոր մասնագետ

Ղևոնդ Կասպարյան

Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ

Գևորգ Գրիգորյան

Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ Թիվ 8 հիմնական դպրոց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023թվականի N 272

**ԿԱՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ԳԱՄՊԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Գ.Տոնոյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23 փողոցի <<Տիվա>> սուպերմարկետի փողոցի վրա Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 38 շենքի 119 բնակարանի բնակչուհի Կարինե Արարատի Գասպարյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով «սիգ» տեսակի ծուկ, ինչն առաջացնում է վարչական իրավախախտում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով այն է ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Կարինե Արարատի Գասպարյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Կարինե Գասպարյանը հայտնել է, որ սոցիալապես ծանր վիճակում է գտնվում, նպաստառու է, ունի իր խնամքի տակ չորս անչափահաս երեխաներ և այդ քայլին դիմել է հանապազօրյա հաց վաստակելու համար և զղջում է կատարած իրավախախտման համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, ինչպես նաև Կարինե Գասպարյանի սոցիալական ծանր վիճակի փաստը հաստատված է համարում, որ կատարվել է վարչական

իրավախախտում, որի համար պատասխանատու է Կարինե Գասպարյանը, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն և իրավախախտումը կատարվել է ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 24-ի N 3 արձանագրությունը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կարինե Արարատի Գասպարյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Արարատի Գասպարյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023թվականի N 273

**ԱԼՎԻՆԱ ՄԻՀՐԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Դ.Ղուշյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23 փողոցի <<Տիվա>> սուպերմարկետի հարակից փողոցի վրա Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 34 շենքի 54 բնակարանի բնակչուհի Ալվինա Միհրանի Գևորգյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով «սիգ» տեսակի ծուկ, ինչն առաջացնում է վարչական իրավախախտում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով այն է ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Ալվինա Միհրանի Գևորգյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Վարչական վարույթի ընթացքում Ալվինա Գևորգյանը հայտնել է, որ սոցիալապես ծանր վիճակում է գտնվում, տան միակ աշխատողը ինքն է/ամուսինը մահացած է/, տղան և հարսը ունեն առողջական խնդիրներ, այդ իսկ պատճառով չեն կարողանում աշխատել և վերջիններիս անչափափաս երեխաները գտնվում են իր խնամքի տակ, այդ քայլին դիմել է հանապազօրյա հաց վաստակելու համար և զղջում է կատարած իրավախախտման համար: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր

փաստական հանգամանքները, ինչպես նաև Ալվինա Գևորգյանի սոցիալական ծանր վիճակի փաստը հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Ալվինա Գևորգյանը, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն և իրավախախտումը կատարվել է ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 27-ի N 4 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ալվինա Միհրանի Գևորգյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվինա Միհրանի Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 մարտի 2023թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2023թվականի N 274

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Վանատուր թաղամասի 95 տան բնակիչ Սերգեյ Նահապետյանի լիազոր անձ Ավարդ Նահապետյանի 2023թ. մարտի 24-ի Կ-703 դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001025 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից 48098 /քառասունութ հազար իննսունութ/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Վանատուր թաղամասի 95 տան բնակիչ Սերգեյ Նահապետյանին՝ առաջացած գերավճարների չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



28 մարտի 2023թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2023թվականի N 275

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 10-ի N 42 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N 2154015) Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 73 հասցեում գտնվող թիվ 16 մանկապարտեզի շենքից 154,04 (մեկ հարյուր հիսունչորս ամբողջ զրո չորս) քառակուսի մետր մակերեսով տարածքը 10 (տասը) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Երեխաների աջակցության հիմնադրամին»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



28 մարտի 2023թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2023թվականի N 276

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.

1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 2 / երկու / հատ,

